սէն մէջ: Եւ ստուգիւ այդ գերագոյնը գըր-քերու, բաց ի շտեմարանն ըլլալէ Աս-տուծոյ խօսքին առ մարդիկ, է միանգա-մայն բով մը մարդկային կենցաղի գանա-զան երեւոյթներուն, որոնց հետ ամբողջ բնութիւնը ու տարերքն է որ կու գան իրենց բնական ոճով և այսպէս առիթ կ'ընծայեն մեզի ուսումնասիրութեան՝ ըլ-լա՛յ իրենց հնութեան, ըլլա՛յ ուրիշ ո՛ և է տեսակէտով, ինչպէս է մեզի համար հոս յատկապէս լեզուականը՝ Աստուածաշունչի հայացման աղերսով:

Հ. Ս. ՖԵՐԱՀԵԱՆ

## ԸՍՏ ԹԱԼՄՈՒՏԻ

ԵՐԲ Աստուած մարդուս հողից ստեղծեց,
Հաւաքեց հողը երկրի չորս կողմից.

Առաւ հարաւից, հիւսիսից առաւ,

Ե՛ւ արեւելքից եւ արեւմուտքից

Որպէս զի մարդը, ո՛ւր որ դեգերէ

Ամեն տեղ իրեն զգայ իր երկրում,

Եւ երբ որ յոգնի, եւ մահը բերէ

Նրա անյագուրդ տենչանքներուն վերջ,

Ամենուր լսէ ձայնը մայրական. —

« Արի՛, որդեակ իմ, հանգչիր գրկիս մէջ »:

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

## ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ու տխրագին քայլերով
Կը բարձրանար Թաբորական լեռն Յիսուս.
Հազիւ երեք աշակերտներն երկիւղով
Կը դիտէին այդ հեռաւոր մեգն ու լոյս:

Եւ նա կ'ելլէր արշալոյսին յանդիման,
Կը խաւարէր աշխարհն անոր ետեւէն.
Խոյս կու տային հորիզոններն անսահման
Ու կը տիրէր ամայութիւնն համօրէն:

Մերկ էր Տաճարն իր փառքերէն հոգեւոր
Եւ Սիոնայի ամպն էր առանց Աստուծոյ,
Որովհետեւ Իսրայէլէն կամակոր
Մեկնեցաւ Տէրն իր Հօրը հետ խօսելու:

Կ'երթար Յիսուս ու կ'արտասուէր որ մարդիկ
Զինքն ատեցին հրաշքներէն ձանձրացած.
Որ պաշտելով տարփանքն ոսկի գեղեցիկ
Հալածեցին զինքը լեռնէ լեռ քաղցած:

Մինչ ինքն անոնց ներողամիտ գթութեամբ
Թոյլ կու տար մինչ որ հըպէին պիղծ ձեռքով.
Երբ կը խօսէր մեղաւորին քաղցրութեամբ,
Աստուածութիւնն իր քանդեցին կասկածով:

Կ'ելլէր հիմա ճամբաներէն արիւնոտ
Ուր բիւրաւոր խաչանեցին մարգարէ.
Ուր ոչ երբեք տապանակի լոյսն աղօտ
Ճառագայթեց ուրախութեան մ'առաւօտ:

Կը շըչային ոտքերուն տակը փըրկչին
Գորշ օձերու խարազաններ շըպրծուն,
Ու կը բախէր թափառական խենդ քամին
Իր սուրբ դէմքին և սրտին խոնջ հեւքերուն:

digitised by A.R.A.R.@